## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am


### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» հոկտեմբերի 2024թ. № 201-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

**1.** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի 06-044-0012-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, 4 բնակելի տուն փոստային հասցեն:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ

**2024թ. հոկտեմբերի 03**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք,
գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ (0256) 2-14-75,
Էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հոկտեմբերի 2024 թվականի N 202-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ, 60-րդ, 64-րդ և 118 հոդվածներով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 583-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Շամիր Սաշիկի Պայյանի (անձնագիր՝ AT0664761, տրված 11.02.2021թ. 053-ից) կողմից ներկայացված դիմումը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.11.2010թ.-ի վճիռը (գործ թիվ ԼԴ3/0398/02/10)

**Որոշում եմ.**

1. Քաղաքացի Շամիր Սաշիկի Պայյանը դիմել է համայնքապետարան, համաձայն ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.11.2010թ.-ի վճռի (գործ թիվ ԼԴ3/0398/02/10) իրեն պատկանող Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 06-105-0312-0015 կադաստրային ծածկագրում գտնվող թիթեղյա շինության զբաղեցրած հողամասի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով: Շամիր Սաշիկի Պայյանին պատկանող թիթեղյա շինությունը փաստացի զբաղեցնում է 0.24628 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերի սահմանված պահանջներին և ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ուստի, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով, վերականգնել Շամիր Սաշիկի Պայյանին պատկանող թիթեղյա շինության զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 0.24628 հա մակերեսի չափով, որը օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է Շամիր Սաշիկի Պայյանին:
2. Փոխել նշված հողամասում, համաձայն ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.11.2010թ.-ի վճռի (գործ թիվ ԼԴ3/0398/02/10) Շամիր Սաշիկի Պայյանին սեփականության իրավունքը ճանաչված թիթեղյա շինության

գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական մթերքների պահեստ գործառնական նշանակության:

3. Հողամասի սահմանները որոշվում են «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից 18.07.2024թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ. տ.

**2024թ. հոկտեմբերի 03**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 03 » հոկտեմբերի 2024թ. № 203-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՎԵՐԴԼՈՎ ԳՅՈՒՂԻ 06-101-0028-0011 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, հիմք ընդունելով Բուրաստան Կարապետի Եփրեմյանի կողմից ներկայացված դիմումը, 02.10.2002թ. Արմավիրի նոտարական գրասենյակի կողմից տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, (ժառանգական գործ՝ 12), «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0028-0011 ծածկագրում գտնվող 0.24835 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0028-0011 ծածկագրով հողամասի մակերեսը 0.24835 հա;

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն՝ «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.24835 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Բուրաստան Կարապետի Եփրեմյանի, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Սվերդլով գյուղի 06-101-0028-0011 ծածկագրի տակ գտնվող 0.24835 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն ու

օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 89.86 քմ մակերեսով բնակելի տան, 5.29 քմ մակերեսով աստիճանավանդակ/բաց պատշգամբի նկատմամբ համաձայն հավելվածի՝ ճանաչել Բուրաստան Կարապետի Եփրեմյանի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2024թ. հոկտեմբեր 03
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

« 04 » հոկտեմբերի 2024թ. № 204-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-009-0046-0018 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, հիմք ընդունելով Վարդան Յոլակի Զիլավյանի կողմից ներկայացված դիմումը, 2015թ. տրված թիվ 8761 (ժառանգական գործ թիվ 368/2015թ.) և 8760 (ժառանգական գործ թիվ 1713/2003թ.) գրանցամատյանով հաստատված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրերը, «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Վերականգնել Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0046-0018 ծածկագրում գտնվող 0.19517 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

ա/ Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0046-0018 ծածկագրով հողամասի մակերեսը 0.19517 հա;

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն՝ հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.19517 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը, որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Վարդան Յոլակի Զիլավյանին՝ 1/2 բաժնեմասով, Մարինե Յոլակի Զիլավյանին՝ 1/2 բաժնեմասով, իսկ մինչև 15.05.2001թ. կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0046-0018 ծածկագրի տակ գտնվող 0.19517 հա մակերեսով հողամասում, այլ անձանց իրավունքներն

ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 148.96 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան, 26.778 քմ և 28.14 քմ մակերեսով բաց պատշգամբների, 9.29 քմ մակերեսով աստիճանավանդակի, 20.09 քմ մակերեսով անասնաշենքի, 4.17 քմ., 2.88 քմ և 2.22 քմ մակերեսով պարիսպների նկատմամբ համաձայն հավելվածի՝ ճանաչել Վարդան Յոլակի Ջիլավյանի և Մարինե Յոլակի Ջիլավյանի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ

2024թ. հոկտեմբերի 04
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 07 » հոկտեմբերի 2024թ. № 205-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Հ. Ավետիսյան փողոց, տուն 12 հասցեի բնակիչ՝ Տելեմակ Ռոբերտի Մինասյանի (անձնագիր՝ AU0445316, տրված՝ 28.09.2021թ., 053-ի կողմից) կողմից տրված դիմում-համաձայնագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող, Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրում գտնվող՝ 06-044-0207-0076 կադաստրային ծածկագրով 0.34639 հա մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 06022024-06-0025 վկայական) գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության, 4-րդ կարգի հողամասը փոխանակել՝ Տելեմակ Ռոբերտի Մինասյանին պատկանող Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրում գտնվող՝ 06-044-0207-0077 կադաստրային ծածկագրով (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 16092024-06-0040 վկայական) 0.34662 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության, 4-րդ կարգի հողամասի հետ:

**2.** Հողամասերի փոխանակության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

**3.** Սույն որոշումից բխող բոլոր գույքային իրավունքների պետական գրանցման, հողամասի հատակագծի հաստատման, պայմանագրի նոտարական վավերացման, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանքներ ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են Տելեմակ Ռոբերտի Մինասյանի կողմից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.
**2024թ. հոկտեմբերի 07**
**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am


### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 07 » հոկտեմբերի 2024թ. № 206-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի 06-009-0053-0013 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Ագարակ, 4-րդ փողոց, 13 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ

**2024թ. հոկտեմբեր 07**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 09 » հոկտեմբերի 2024թ. № 207-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերով, ինչպես նաև «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 27.12.2023թ. թիվ 84-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետով՝

**որոշում եմ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 01-01-01 դասակարգմամբ «կառավարման ապարատ» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունը.

4111 հոդվածով սահմանված 94.603.600 (իննսունչորս միլիոն վեց հարյուր երեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարից 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը տեղափոխել 4261 հոդված:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

**2024թ. հոկտեմբերի 09**
գ. Լոռի Բերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

« 11 » հոկտեմբերի 2024թ. № 208-Ա

**ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0004-0010 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Կողես, 2-րդ փողոց, 4 փակուղի, 2 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** [signature] **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2024թ. հոկտեմբեր 11**
**գ. Լոռի Բերդ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » հոկտեմբերի 2024թ. № 209-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես գյուղի 06-056-0004-0009 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Կողես, 2-րդ փողոց, 14 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

**2024թ. հոկտեմբեր 11**
**գ. Լոռի Բերդ**